

## Արձանագրություն N 1-01/17

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2017 թ.-ի  
հունվարի 31-ի նիստի

Ներկա էին՝ Թորքմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Խաչատրյան Գ.Մ. (ֆ.մ.գ.թ.), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ.), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա., Պողոսյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ., Բաղունց Գ. Ռ., Հակոբյան Շ.Հ., Շահբազյան Ա.Վ., Դավթյան Շ.Ա., Զաքարյան Գ.Է. (ուսանող), Աբաղյան Մ.Գ. (ուսանող), Ծատրյան Ս.Բ. (ուսանող), Առուշանյան Գ.Ա. (ուսանող):

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ.դոցենտ), Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ., դոցենտ.) և Հարությունյան Ռ.Մ.:

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- 1.«Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին տարակարգեր շնորհելու մասին» կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
- 2.«Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման հանձնաժողովի գործունեության» կարգի մասին
3. «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության» կարգի մասին
- 4.«Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ֆակուլտետի դեկանի ընտրության» կարգի մասին
- 5.«Շուշիի տեխնոլոգիական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության» կարգի մասին
- 6.Շուշիի տեխնոլոգիական համալսարանում դեկանի և ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների մրցույթ հայտատարելու մասին
- 7.Այլ հարցեր

**Լսեցին** 1-«Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին տարակարգեր շնորհելու մասին» կարգում առաջարկվեց կատարել փոփոխություններ և լրացումներ (զեկուցող՝ ռեկտոր՝ Հ.Վ. Թորքմաջյան)։

**Որոշեցին** 1-Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2016թ. նոյեմբերի 24-ի N2-11/16/2 որոշմամբ հաստատված «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին տարակարգեր շնորհելու մասին» կարգում (այսուհետև՝ կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝  
-5-րդ կետում 2-րդ նախադասության «երեք և ավելի տարիների ստաժ» բառերից հետո «կամ» բառը փոխարինել «և» բառով,  
-8-րդ կետում 2-րդ նախադասության «երեք և ավելի տարիների ստաժ» բառերից հետո «կամ» բառը փոխարինել «և» բառով,

-11-րդ կետը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ՝

«Գիտական աստիճան և գիտական կոչում չունեցող անձին շնորհվում է 11-րդ տարակարգ, եթե նա ունի դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում, վերջին 5 տարիների ընթացքում տպագրված գիտական և (կամ) ուսումնամեթոդական առնվազն 5 աշխատանք (ագրարային գիտությունների համար՝ 2), ավարտել է ասպիրանտուրան կամ հանձնել է թեկնածուական քննությունները կամ ունի գիտական գիտամանկավարժական գործունեության առնվազն 10 տարվա ստաժ»:

-12-րդ կետը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ՝

«Գիտական աստիճան և գիտական կոչում չունեցող անձին շնորհվում է 12-րդ տարակարգ, եթե նա ունի դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում, վերջին 5 տարիների ընթացքում տպագրված գիտական և (կամ) ուսումնամեթոդական առնվազն 2 աշխատանք (ագրարային գիտությունների համար՝ 1), ավարտել է ասպիրանտուրան կամ հանձնել է թեկնածուական քննությունները կամ ունի գիտական գիտամանկավարժական գործունեության առնվազն 3 տարվա ստաժ»:

**Լսեցին 2-** «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման հանձնաժողովի գործունեության» կարգը գիտխորհրդին ներկայացրեց «Հումանիտար և լեզուների» ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ՝ Մ.Ա. Հարությունյանը:

**Որոշեցին 2-** Հաստատել «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման հանձնաժողովի գործունեության» կարգը:

**Լսեցին 3-** Գիտխորհրդի քննարկմանը ներկայացվեց «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ամբիոնի վարիչի ընտրության» կարգը:

**Որոշեցին 3-** Հաստատել «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ամբիոնի վարիչի ընտրության» կարգը:

**Լսեցին 4-** Գիտխորհրդի քննարկմանը ներկայացվեց «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ֆակուլտետի դեկանի ընտրության» կարգը:

**Որոշեցին 4-** Հաստատել «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ֆակուլտետի դեկանի ընտրության» կարգը:

**Լսեցին 5-** Գիտխորհրդի քննարկմանը ներկայացվեց «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության» կարգը:

**Որոշեցին 5-** Հաստատել «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության» կարգը:

**Լսեցին 6-** Գիտխորհրդին առաջարկություն ներկայացվեց Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ճարտարապետաշինարարության ֆակուլտետի դեկանի, «Հումանիտար և լեզուների» և «Էկոնոմիկայի և կառավարման» ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների մրցույթ հայտատարելու մասին:

**Որոշեցին 6-** Մեկ ամսյա ժամկետով հայտարարել մրցույթ Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ճարտարապետաշինարարության ֆակուլտետի դեկանի, «Հումանիտար և լեզուների» և «Էկոնոմիկայի և կառավարման» ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների համար:

**Լսեցին 7-** Գիտխորհրդի քննարկմանը ներկայացվեց «Ագրոնոմիայի» ամբիոնի դոցենտ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու՝ Սարիբեկ Բարդուղի Գալստյանի հեղինակած «Հողապահպան երկրագործություն», «Գյուղմեքենայացման և

տրանսպորտային փոխադրումների» ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու՝ Պավլիկ Յուրիկի Գասպարյանի ու ավագ դասախոս՝ Սերյոժա Աբրահամի Ադամյանի հեղինակած «Բեռնատար ավտոմոբիլային փոխադրումներ», «Հումանիտար և լեզուների» ամբիոնի ավագ դասախոս՝ Նունե Նորբեյի Ավագյանի «Учебное пособие по русскому языку первого курса технических вузов» և «Քաղաքաշինության, էներգետիկայի և ջրային համակարգերի» ամբիոնի ավագ դասախոս՝ Անահիդա Արտաշի Պողոսյանի հեղինակած «Գծագրական երկրաչափություն» աշխատանքները:

**Որոշեցին 7-** Դիմել ԼՂ ԿԳ և սպորտի նախարարությանը Շուշիի տեխնոլոգիական համալսարանի «Ագրոնոմիայի» ամբիոնի դոցենտ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու՝ Սարիբեկ Բարդուղի Գալստյանի հեղինակած «Հողապահպան երկրագործություն» աշխատանքը որպես դասագիրք, «Գյուղմեքենայացման և տրանսպորտային փոխադրումների» ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու՝ Պավլիկ Յուրիկի Գասպարյանի ու ավագ դասախոս՝ Սերյոժա Աբրահամի Ադամյանի հեղինակած «Բեռնատար ավտոմոբիլային փոխադրումներ» աշխատանքը որպես ուսումնական ձեռնարկ, «Հումանիտար և լեզուների» ամբիոնի ավագ դասախոս՝ Նունե Նորբեյի Ավագյանի «Учебное пособие по русскому языку первого курса технических вузов» աշխատանքը որպես մեթոդական ձեռնարկ և «Քաղաքաշինության, էներգետիկայի և ջրային համակարգերի» ամբիոնի ավագ դասախոս՝ Անահիդա Արտաշի Պողոսյանի հեղինակած «Գծագրական երկրաչափություն» աշխատանքը որպես դասագիրք տպագրելու համար:

**Նախագահ՝ ստորագրություն Հ.Վ.Թորմաջյան**  
**Քարտուղար՝ ստորագրություն Ա.Ա.Առաքելյան**